



### ՀԱՅ ԶՈՐԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԶԻՆՎՈՐՆԵՐ ՑԱՐ ՔՐՈՒՄԻ ԲԱՆԱԿԻՆ ՄԵՋ

813 թվականին պոպկարաց ցար Բրումի դեպի Բյուզանդիոն կատարած արշավանքի ատեն բանակի աջ թևին գլխավոր հրամանատարն էր Պոլի Տուքան, որուն հրամանին տակն էին ռազմագետներ՝ Վարդան և Յանի, իսկ ձախ թևի՝ Բաֆխան Իրիթսիսի բանակին մեջն էին ռազմագետներ Կրիկորաս և Գորտիլես (Գարտջույ): Փրոֆ. Նիկոլա Ադոնցի համաձայն, այս ռազմագետները ծագումով հայեր էին (Տես Ադոնցի «Սամուել» պատմական աշխատանքը, էջ 54, տարի 1908):

Ուրեմն Ադոնցի այս հավաստիացումը մեզի իրավունք կուտա հավատալու, որ Վարդանես, Կրիկորաս, Յանի և Գորտիլես հույն գերիներ չէին, ինչպես կուզե ցույց տալ փրոֆ. Պեշկիև<sup>1</sup>, այլ Բյուզանդիոնեն եկած հայ զորականներ, որոնք մտած էին ցար Բրումի բանակին մեջ՝ կուլելու համար բյուզանդական բանակին դեմ: Թեև անոնց ազգանունները հունական ձևով տրված է բյուզանդական և հետո ալ պոպկարական պատմիչներու կողմն, բայց պետք չէ մոռնալ, որ ոչ հունական, օտար անձնանունները հունական ձևով կոչելն սովորական բան մըն էր հույն կամ բյուզանդացի պատմագիրներուն քով, որոնք Պետրոսը-Պետրոնաս, Գուրգենը-Գուրկունաս, Գարտջույը-Գորտիլես, Մուշեղը-Մուսելես, Գեղամը-Գեղամեն, և այլն ըրած են իրենց գրություններուն մեջ: Մեր այս կարծիքը կհաստատուի նաև Նյու-Շրբրգիի Ռյուտկերս հավաքարանի բյուզանդագետ հույն փրոֆ.

Խարանիսի 1963-ին գրած «Հայերը Բյուզանդական Կայսրության մեջ» անգլիերեն աշխատասիրության մեջ:

Անուններն հունական ձևով տրված և վերև հիշված ռազմագետներուն հայ ծագում ունեցած ըլլալու ուրիշ մեկ համոզիչ պատճառն ալ մեզի համար այն է, որ ցար Բրում ստակալի հակառակորդ մըն էր բյուզանդացիներուն և ծայրատիճան կատեր հույները, որով կարելի չէ ենթադրել, որ թույլ տար իր զինվորներուն զլուխն անցնելին հույն զորականներ և ուղարկվելին կուլելու Բյուզանդիոնի հույներուն դեմ:

Այս մեր կարծիքը մասամբ կհաստատուի նաև պոպկար ծանոթ բյուզանդագետ փրոֆ. Իվան Տուչևի 1963-ին հրատարակած մեկ աշխատասիրությամբ<sup>2</sup>, որուն մեջ կշեռտվի, թե ցար Բրումի Բյուզանդիոնի դեմ կատարած արշավանքի ժամանակ զոհված պոպկար զինվորներու անուններուն մեջ կան նաև Վարդան, Արտավազդ և այլ հայկական անուններ:

Ահա՛ այս և նման գրավոր հուշերը կուզան մեզ վկայիլ, թե դեռ 813-ին կամ այդ թվականեն քիչ առաջ Պոպկարիոն մեջ հաստատված կամ ապրող հայեր կային, որոնք կապ և գործակցություն ունեցած էին արդեն պոպկար ազատատենչ ժողովրդին հետ և մտած բանակին մեջ փրկելու համար պոպկարական հայրենիքը օտար զավթիչներու լուծեն:

ՍԱՐԳԻՍ ՓԱՉԱՃՅԱՆ

Սոֆիա (Պոպկարիա)

<sup>1</sup> Փրոֆ. Պեշկիև, Նավասարդկարական արձանագրություն, էջ 104, տարի 1934:

<sup>2</sup> E. Follerie, un acolitita inedita per i martiri di Bulgaria dell'anno 813, t. XXXIII, էջ 101.